



# Վահան Թորոսեանց

## Մտածումի շիթեր

\*\*\*

Երբ մարդ չկրնար աշխատել՝ կա՛մ կը լռե կա՛մ կուլա: Լռությունը Անհունին կրկներևույթն է տիեզերքին վրա: Մարդ ընդհանրապես կուլա, որովհետև ամեն մարդ չկրնար Անհունության շարունակությունն ըլլալ:

Լույսի շարունակությունը, պատկերներու հաճախանքը, կյանքի խավարակոտ անկյունները թափանցելու Ուժը՝ դեպի գերեզման ստույգ վագր մը կը նշանակե: Ընդհանրապես բանաստեղծները շուտ կը մեռնին, որովհետև շուտ կը տեսնեն:

\*\*\*

Գանգեր կան, որոնց մեջ կրնա սեղմվիլ վերջալուսային հորիզոնի մը բովանդակ կարմիրը, մրրկահույզ օվկիանոսին գիշերվան մը հատաչանքը, Անհունություն մը, խավար մը աստղագարդ, և արևելյան գեփյուռի մը տարագիր թեր:

\*\*\*

Պետք է մեծ մարդոց ընկերանալ՝ ներշնչվելու համար անոնց մեծ պատկերեն: Պզտիկությունը ամենն զգվելի բանն է Արևին տակ:

\*\*\*

Մափոր մը ջուրը ալիք չի կրնար կազմել և փրփուր չունի, ո՛չ ալ խաղաղ ծովերու աստվածային վեհությունը:

\*\*\*

Ձեզմե շատերը ընկերներ ունիք, որոնք կը պաշտպանեն ձեզ ձեր ստությանը մեջ, բարոյական նվաճում մըն է այդ անոնց համար և ընկերային կոտ չարիք մը, որ մարմին կառնե անմեղորեն, բայց մեծ է այդ գոհողությունը անհատական բարոյական տեսակետեն:

\*\*\*

Մի՛ սիրեք Սահմանը: Եթե ըսեին ինձ, թե քու սահմանդ պիտի ըլլա մինչև անտեսանելի հորիզոնը՝ պիտի բողոքեի այդ անողոր կարգադրության հանդեպ: Անսահմանության ըղձանքը անհագություն չէ: Անհագությունը ծնունդ կառնե «Ես»-ի փառամոլութենէն: Անսահմանության ըղձանքը աստվածային Սաղմն է մարդոց մեջ:

1912 թ.

\*\*\*

Գարնան, ձյունհալի ժամանակ, երբ կը տեսնեմ լեռներու կողերեն դանդաղորեն վազող ջրերը, որոնք կուգան վարը, կը կազմեն մեծ առուներ և երթալով դեպի հովիտները կը միանան ուրիշ առուներու և կը հեղեղնան՝ կզգամ, որ մարդուն հմտությունն ալ այդպէս դանդաղորեն, կաթիլներով կը կազմվի և օր մըն ալ կը դառնա անդիմադրելի, հզոր և տիրական:

Հոգեկան ուժն ալ, կյանքի գառիթափեն դարվար, կը կազմվի փոքրիկ կաթիլներով:

Արհամարհել փոքր բաները, կը նշանակե գաղափար շունենալ մեծությանց կառուցման մասին:

\*\*\*

Հոգ չէ, թե ուր դիմես, իմ փոքրի՛կ տղաս, դեպի մեծ ուրախություն կամ դեպի մեծ վիշտ, դեպի փոթորիկ և կամ դեպի մութ ատելություն . գիտցի՛ր, որ քու քայլերդ պետք է ըլլան պայծառ: Երբ ոտքերդ կը զարնես գետին և անոնք չեն թնդար, ոչ մի տեղ չես հասնիր դուն՝ իզուր է քու նպատակդ:

\*\*\*

Ավելի լավ է ըլլալ միամիտ, պարզ, ուրիշներու վստահող, գոհաբերող և ստեղծագործ, քան ըլլալ «իմաստուն», ամեն բանի մեջ ետինը մտածել, ամեն բանի մեջ «իմաստության» ուժով հեռատեսանելի դժբախտություն, ինտրիգ, մթություն:

Այսպես՝ իմաստությունը անարժեք է, անպետ և մինչև անգամ վտանգավոր՝ երբ մարդը կը հասցնե անշարժ, անթռիչ փիլիսոփայության մը:

\*\*\*

Պետք է մտածել մարդուն մասին:

Պետք է ջանալ մարդուն կարողությունները հասցնել իրենց բարձրագույն կատարելության:

Աստվածայի՛նը չէ, որ մեզ առավելապես կը շահագրգռե, այլ մարդկայինը:

Հեղափոխությունները կամաց-կամաց մարդը մարդուն մեջ կը մխրճեն, մարդը կը մոտեցնեն մարդուն:

Աստվածներով զբաղիլը մեզ ոչ մի տեղ չի հասցներ:

Մարդը . . . իմ նպատա՛կն է: